ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Թումանյան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր

Բովանդակություն

1. Ներածություն---------- 3-4
2. Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները------- 5-7
3. Թումանյան համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող եկամուտները- 8-9
4. Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների---------- 10-11
5. Թումանյան համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող ծախսերը------ 12
6. Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների---------- 13-14
7. Բյուջետային ծախսերի 2026-2027թթ. կանխատեսվող ծախսերի համեմատությունը 2025թ-ի նկատմամբ ---------- -- 15
8. Թումանյան համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող դեֆիցիտը---- 16

Ներածություն

Թումանյան համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Թումանյան համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում է ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

Թումանյան համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> և << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքներով:

Համայնքի ՄԺԾԾ-ն համայնքի հնգամյա զարգացման ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքն է առաջիկա երեք տարիների համար,որը հնարավորություն է տալիս առավել իրատեսական և առարկայական դարձնել նախատեսվող ծրագրերը:

Առաջիկա երեք տարիների՝ տեղական ինքնակառավարման մարմինների ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքների համար կառավարելու ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Թումանյան համայնքի հաջորդող երեք տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Թումանյան համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալու առավել իրատեսական, առարկայական դարձնել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է **(ՄԺԾԾ)**: Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ

հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Այսինքն՝ համայնքի տարեկան բյուջեի նախագծի կազմման գործընթացն առաջնորդվելու է արդեն իսկ կազմված համայնքի ՄԺԾԾ-ով՝ առաջիկա տարվա համար հաստատված հաշվարկներով և հիմնավորումներով: Եվ հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ համայնքի **ՄԺԾԾ նախագծի մշակումը նույնպես, ինչպես և տարեկան բյուջեի նախագծի մշակումը, համայնքի բյուջետային գործընթացի լիիրավ փուլ է համարվում:**

1. **Համայնքների կողմից մշակվող 2026-2028թթ. միջնաժամկետ ծրագրերի նախագծերին ներկայացվող ընդհանուր պահանջները:**
   1. Առաջիկա երեք տարվա՝ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները: Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հիմք է ծառայում համայնքի բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար: (հիմք՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մաս):
   2. Համայնքների ՄԺԾԾ-ն բաղկացած է երկու մասից՝ համայնքի եկամուտների շարադրող մասից և համայնքի ծախսային քաղաքականությունը շարադրող մասից (հիմք՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածի 1-ին մաս):

Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները

Թումանյան համայնքի 2026-2028թթ. համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխվելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:
5. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
6. Կոշտ թափոնների կառավարումն, այդ թվում՝ աղբահանության կազմակերպում և կարգավորում:
7. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
8. Զբոսաշրջության ենթակառուցվածքերի զարգացման խթանումը և զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
9. Կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:

Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային միջոցառումներից օգտվելու ներառականության ապահովումը,մշակութային,մարզական և հասարակական կյանքի աշխուժացում:

11. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը:
12. Բնակելի ֆոնդի վերանորոգումն ու պահպանումը, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, պատշգամբների վերանորոգման աշխատանքների ապահովումը:
13. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:
14. Տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղվածությունը գյուղատնտեսության ոլորտն է, քանի որ համայնքի բնակավայրերը հիմնականում գյուղական բնակավայրեր են ,որոնք ունեն սեփականաշնորհված հողեր,հետևաբար գերակա է համայնքի համար վարելահողերի մշակմանը ուղղված ծրագրերը:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծախսերը և դրանց գծով հաշվարկները ներկայացնելիս առաջնորդվել ենք Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանով, ՀՀ ֆինանսների նախարարի 2008 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության համայնքի բյուջեի օրինակելի ձեվը և նշված ձեվի առանձի

հատվածների լրացման մասին ցուցումները հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2004 թվականի մարտի 5-ի N 194-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 730 հրամանով:

Ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ հաշվարկել ենք «Դաս-Բաժին-Խումբ» սինթետիկ մակարդակով:

Ծախսերի նախագծում համայնքի ղեկավարի, նրա աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրության չափերը որոշելիս համայնքի ղեկավարը ղեկավարվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (գնման) հոդվածներով ծախսերի նախատեսման դեպքում այդ ծախսերի հաշվարկներում ապրանքների և ծառայությունների գները հաշվարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ մոտեցմամբ՝

- այն դեպքում, երբ տվյալ հոդվածի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գները սահմանվում են համապատասխան կարգավորող մարմինների կողմից, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով սահմանված սակագներից.
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա են նախորդ տարիներից շարունակվող (գործող) պայմանագրեր, որոնք տարածվում են ընթացիկ տարվա վրա, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով համապատասխան պայմանագրերով սահմանված գներից.
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա չեն ընթացիկ տարվա վրա տարածվող պայմանագրեր, սակայն առկա են համապատասխան (գործող) պայմանագրեր նախորդ տարվա համար, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով նախորդ տարվա համապատասխան պայմանագրերով սահմանված գներից.
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար չկան գործող պայմանագրեր, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով ընթացիկ տարվան նախորդող տարվա համապատասխան փաստացի գներից.
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գործող պայմանագրերի, սահմանված սակագների և ընթացիկ տարվան նախորդող տարվա համապատասխան փաստացի գների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով վերջինիս վերաբերյալ ՀՀ պաշտոնական վիճակագրության կամ այլ աղբյուրների հրապարակումներում առկա տեղեկատվությունից:
- Բյուջետային հայտերում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ցանկացած հոդվածով ծախսերի հաշվարկներին կից անհրաժեշտ են հիմնավորումներ՝ հստակ

նշելով այդ հոդվածով ծախսերի հաշվարկման օրենսդրական կամ կանոնակարգային հիմքերը և գնագոյացման սկզբունքները:

- Բյուջետային հիմնարկները կազմում և համայնքի ղեկավարին են ներկայացնում իրենց միջնաժամկետ ծախսերի ծրագրերը՝ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ժամկետում: Բյուջետային հիմնարկի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն ստորագրում է բյուջետային հիմնարկի ղեկավարը (հիմք՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1.5-րդ և 1.6-րդ կետեր):

Թումանյան համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող եկամուտները

Համայնքի եկամուտները շարադրող մաս

Եկամուտները շարադրող մասը բաղկացած է առաջիկա երեք տարիների համար բոլոր տեսակի եկամուտների ուղղությունների կանխատեսումները:

Թումանյան համայնքի 2026-2028 թվականների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 708,623.0, 727,751.0, 906,351.0 հազ. ՀՀ դրամ:

Ընդամենը եկամուտների մասում աճ է նախատեսվում սեփական եկամուտների կազմում: Հիմնական աճը նախատեսվում է հարկ անշարժ գույքի մասով և գույքահարկ փոխադրամիջոցներից եկամտատեսակից :

Սակայն անշարժ գույքի հարկի բազայում առկա են անհամապատասխանություններ: Եկամուտների հավաքագրումը պարունակում է ռիսկեր կապված որոշ խոչընդոտների հետ՝ ինտերնետ կապի աշխատանքը շատ թույլ է: Բնակավայրերում ներդրվել է POS վճարային համակարգ, որը որոշ չափով հեշտացնում է հարկերի հավաքագրման աշխատանքը: Հարկատուների բացակայությունները բնակավայրերից, բազայում առկա անճշտությունները և այլ ռիսկեր առաջ են բերում համայնքի ռազմավարական ծրագրերի իրականացման հետ կապված դժվարություններ:

Համայնքի բյուջեի մուտքերի կառավարումն իրականացնելիս, համայնքի ավագանին և համայնքի ղեկավարն իր աշխատակազմով ու ենթակա կազմակերպություններով ունեն օրենքով սահմանված իրենց իրավասությունների շրջանակը և իրականացնում են ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրահատուկ գործառույթներ:

Առաջիկա երեք տարվա՝ տեղական ինքնակառավարման մարմինների ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքների համար կառավարելու ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան: Միաժամանակ ՄԺԾԾ-ն հիմք է հանդիսանում համայնքի բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար:

ՄԺԾԾ գործընթացի շրջանակներում համայնքի ավագանին համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիման վրա ընդունում է առաջիկա երեք տարվա հարկաբյուջետային և ծախսային քաղաքականության վերաբերյալ հիմնական որոշումները, սահմանում է համայնքային բյուջեներով իրականացվելիք բյուջետային ծախսերի՝ ըստ ուղղությունների ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակները:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաստատված ցանկացած ռազմավարություն և ծրագիր պետք է արտացոլվի համայնքային բյուջեում՝ ապահովելով կապը ռազմավարության և համայնքի բյուջեի միջև:

Համայնքի ֆինանսական վիճակի բարելավման նպատակով նախատեսվում է կատարել մի շարք միջոցառումներ,մասնավորապես անհրաժեշտ է ճշգրտել անշարժ գույքի հարկման բազանները,գույքահարկ փոխադրամիջոցներից եկամտատեսակը հարկման բազայում թարմացնել և մաքրել անճշտություններից, բնակավայրերում ապահովել ինտերնետ հասանելիությունը,

կազմակերպել վճարային համակարգերի տեղադրման աշխատանքներ, բնակչության շրջանում կատարել բացատրական աշխատանք հարկային նոր համակարգից օգտվելու ուղղությամբ:

Բացի դրանից պետք է խթանել բնակչության վճարողունակության մակարդակի բարձրացմանը, թե աշխատատեղերի ստեղծման, թե գյուղատնտեսական մթերքների իրացման համար շուկայի ձեռք բերման միջոցով:

Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների

Թումանյան համայնքի 2026-2028թթ. եկամուտների կազմում՝ ընդհամենը եկամուտների ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 708,623.0, 727,751.0, 906,351.0 հազ. ՀՀ դրամ,

2026-2028թթ. ՄԺԾԾ-ով սեփական եկամուտների եկամտատեսակներն են՝

- Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 29,150.0, 29,150.0 և 30,550.0 հազ. ՀՀ դրամ,
- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով՝ 41,000.0, 43,000.0 և 44,000.0 հազ. ՀՀ դրամ,

  Գույքահարկ անշարժ գույքի մասով և գույքահարկ փոխադրամիջոցների մասով եկամուտները կանխատեսելիս հաշվի է առնվել գույքահարկի բազայում առկա տվյալները,
- Տեղական տուրքերը կանխատեսվել է համապատասխանաբար 1,801.0, 1,801.0 և 1,801.0 հազ. ՀՀ դրամ,

  Տեղական տուրքերի մասով համայնքի եկամուտների հաշվարկման համար կարևոր է բազայի գնահատումը, տեղական տուրքերի քանակների կանխատեսման իրատեսական լինելը,
- Գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 8,000.0, 8,000.0 և 8,300.0 հազ. ՀՀ դրամ,
- Գույքի վարձակալությունից եկամուտները համայնքային սեփականություն հանդիսացող պահուստային հողերից վարձակալական պայմանագրերով բնակչությանը տրված հողերի վարձավճարներից գոյացող վարձավճարներն են,
- Ապրանքների մատակարարումից ¨ ծառայությունների մատուցումից համայնքի բյուջեի եկամուտները նախատեսված է համապատասխանաբար 550.0, 550.0, 550.0, հազ. ՀՀ դրամ,
- Վարչական գանձումներ՝ 8,150.0, 8,150.0 և 8,150.0 հազ. ՀՀ դրամ,

  Համայնքի և հանայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրերին համապատասխան գանձվող վարձավճարները համապատասխանաբար՝ 8,150.0, 8,150.0 և 8,150.0 հազ. ՀՀ դրամ, այդ թվում է նաև աղբահանության վարձավճարները,
- Աղբահանության վճարներ՝ 4,300.0, 4,300.0 և 4,300.0 հազ. ՀՀ դրամ,
- Այլ եկամուտները՝այդ թվում պահուստային ֆոնդը կանխատեսվում է համապատասխանաբար 70,000.0,110,500.0 և 33,000.0 հազ. ՀՀ դրամ,

  Պետության կողմից տրամադրվող, հատկացվող դրամաշնորհները՝ այդ թվում ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան, նախնական կանխատեսմամբ նախատեսվում է համապատասխանաբար 312,972.0, 388,600.0, և 408,000.0 հազ.ՀՀ դրամ, սուբվենցիաները կանխատեսվում է համապատասխանաբար՝ 300,000.0, 240,500.0 և 395,000.0 հազ.ՀՀ դրամ,

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքին համապատասխան համայնքներին տրամադրվում է պետական բյուջեից պաշտոնական դրամաշնորհներ, որոնց մի մասը պետական բյուջեից հատկացվող ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներն են, իսկ մյուս մասը կապիտալ ծախսերի համար տրվող սուբվենցիաներն են, որոնք հատկացվում են համայնքներին բացառապես կապիտալ ծախսեր կատարելու համար համայնքների կողմից ներկայացվող ծրագրային հայտերի հիման վրա:

Համայնքի եկամուտների շարադրող մասը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

- 2026-2028թթ. համար համայնքի եկամուտների կանխատեսումների և դրանց ռիսկերի վերաբերյալ,
- եկամուտների ուղղությամբ աշխատանքների ընթացքի գնահատականի և 2025-2027թթ. ՄԺԾԾ-ով համայնքի բյուջեով եկամուտների ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ՝ 2026-2028թթ. ՄԺԾԾ-ով համայնքի եկամուտներում տեղ գտած եկամուտների ցուցանիշների նկատմամբ շեղումների կամ փոփոխությունների բացատրություն:

Պետք է նշել ,որ 2026թ-ի և 2027թ.-ի եկամուտների կանխատեսումը 2025թ-ի հաստատված ծրագրի նկատմամբ ունի որոշակի տարբերություններ և շեղումներ, մասնավորապես՝

2026թ-ի բյուջեի (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 708,623.0 հազ.ՀՀ դրամ 2025թ-ի 477,918.7 հազ.ՀՀ դրամի դիմաց,իսկ 2027թ.-ի ընդհանուր եկամուտը ծրագրվել է 727,751.0 հազ.ՀՀ դրամ,ինչպես տեսնում ենք այն երկու դեպքում էլ աճել է: Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 2026թ-ին 95,651.0, 2027թ, ին՝ 98,651.0 հազ.ՀՀ դրամ 2025թ.ի 90,836.9 հազ.ՀՀ դրամի դիմաց:

Վերլուծությունը ավելի պատկերավոր և հստակ կլինի եկամտատեսակները առանձին տեսքով ներկայացնելու պարագայում.

Հարկային եկամուտները և տուրքերը 2026թ.-ին ծրագրվել է 71,951.0, 2027թ.-ին, 73,951.0 հազ. ՀՀ դրամ՝ 2025թ.ի 66,706.9 հազ.ՀՀ դրամի դիմաց

- Շինությունների գույքահարկը 2026թ.-ի նախագծով ծրագրվել է 50.0, 2027թ-ին՝ 50.0 հազ.ՀՀ դրամ 2025թ.- 50.0 հազ.ՀՀ դրամ.
- Հողի հարկը ծրագրվել է 2026թ.-ի նախագծով 4,500.0, 2027թ.-ին՝4,500.0 հազ.ՀՀ դրամ 2025թ.-ի , 4690.0 հազ. ՀՀ դրամի դիմաց.
- Անշարժ գույքի հարկը ծրագրվել է 2026թ.-ի նախագծով՝ 24,600.0, 2027թ.-ին՝ 24,600.0 հազ. ՀՀ դրամ 2025թ.-ի 22,500.0 հազ. ՀՀ դրամի դիմաց.
- Փոխադրամիջոցների գծով գույքահարկը ծրագրվել է 2026թ.-ի նախագծով՝ 41,000.0, 2027թ.-ին՝ 43,000.0 հազ.ՀՀ դրամ 2025թ.-ի 37830.5 հազ.ՀՀ դրամի դիմաց.
- Տեղական տուրքերը ծրագրվել է 2026թ.-ի նախագծով 1,801.0,2027թ.-ին՝ 1,801.0 հազ.ՀՀ դրամ 2025թ.-ի 1,636.4 հազ.ՀՀ դրամի դիմաց.
- Հիմք ընդունելով ֆինանսական համահարթեցման սկզբունքով ՀՀ համայնքներին տրամադրվող դոտացիաները 2026թ.-ի նախագծով ծրագրվել են 312,972.0, 2027թ.-ին՝ 388,600.0 հազ. ՀՀ դրամ 2025թ.-ի 297,841.4 հազ.ՀՀ դրամի դիմաց.իսկ կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով տրվող սուբվենցիաները 2026թ.-ի նախագծով ծրագրվել են 300,000.0,2027թ.-ին՝ 240,500.0 հազ.ՀՀ դրամ 2025թ.-ի 89,013.1 հազ.ՀՀ դրամի դիմաց.
- Այլ եկամուտները 2026թ.-ի նախագծով ծրագրվել են 23,700.0, 2027թ.-ին՝ 24,700.0 հազ. ՀՀ դրամ 2025թ.-ի 24,130.0 հազ.ՀՀ դրամի դիմաց.

  Ինչպես տեսնում ենք համեմատական վերլուծության ժամանակ մեկ եկամտատեսակը մի դեպքում աճում է, մի դեպքում՝ նվազում, որը արդյունք է բազայում ճշգրտումներ կատարելու և այլ կանխատեսումների:

Թումանյան համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող ծախսերը

Համայնքի ծախսերը շարադրող մաս

Թումանյան համայնքի 2026-2028թթ. ծախսերը ՄԺԾԾ-ով կանխատեսվում են համապատասխանաբար՝ 856,623.0, 902,251.0 և 954,351.0 հազ.ՀՀ դրամ և միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը: Ծախսերի քաղաքականության և նպատակներին հասնելու սկզբնաղբյուրն է հանդիսանում Թումանյանի համայնքապետարանի պահպանման ծախսերի համատեքստում ստանալ այնպիսի մարդկային ռեսուրս, որը ի վիճակի կլինի համապատասխան ծառայությունները մատուցել համայնքին՝ լուծելով համայնքի առջև դրված կայուն զարգացման պահանջները՝ մշակելով և կատարելով դրա իրագործմանն ուղղված բյուջետային ծրագրերը: Ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին համապատասխան՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի:

Ընդհանուր ծախսերը ըստ բյուջետային տնտեսագիտական դասակարգման բնույթների կարելի է նկարագրել հետևյալ խմբերով.

- Աշխատանքի վարձատրություն՝ 90,000.0,99,000.0,110,000.0 հազ.,ՀՀ դրամ
- Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում՝ 86,550.0, 92,600.0, 131,600.0 հազ. ՀՀ դրամ
- Դրամաշնորհներ՝ 142,550.0, 147,400.0, 158,200.0 հազ.ՀՀ դրամ
- Այլ ծախսեր՝ 89,523.0, 148,251.0, 111,551.0 հազ.ՀՀ դրամ
- Հիմնական միջոցներ՝ 448,000.0, 415,000.0, 443,000.0 հազ.ՀՀ դրամ
- Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր՝ (45,000.0), (38,000.0), (10,000.0) հազ.ՀՀ դրամ

Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների

Կանխատեսվող բյուջետային ծախսերի բաշխման ոլորտային սկզբունքը կայանում է Թումանյան համայնքի համաչափ զարգացման և ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում հանգած խնդիրների լուծման տեսլականներով, և այն առավել մատչելի ձևով ներկայացված է բյուջետային դասակարգման գործառական խմբերում, մասնավորապես դրանք ըստ բաժինների բաշխված են հետևյալ կերպ.

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ համապատասխանաբար՝ 170,200.0, 219,200.0 և 344,200.0 հազ. ՀՀ դրամ
- Տնտեսական հարաբերություններ՝ 316,800.0, 183,800.0 և 349,300.0 հազ. ՀՀ դրամ
- Շրջակա միջավայրի պաշտպանություն՝ 21,000.0,22,000.0 և 25,000.0 հազ.ՀՀ դրամ
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն՝ 181,000.0, 188,000.0 և 150,000.0 հազ. ՀՀ դրամ
- Հանգիստ, մշակույթ և կրոն՝ 12,500.0, 13,700.0 և 13,800.0 հազ. ՀՀ դրամ
- Կրթություն՝ 65,600.0,127,300.0 և 65,500.0 հազ. ՀՀ դրամ
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 89,523.0, 148,251.0 և 111,551.0 հազ. ՀՀ դրամ
- Պահուստային ֆոնդի վարչական մասից ֆոնդային բյուջե հատկացումներ՝ 70,000.0, 110,500.0 և 33,000.0 հազ.ՀՀ դրամ:

Վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե նախատեսվում է հատկացնել՝ միջնաժամկետ կտրվածքով համապատասխանաբար 70,000.0, 110,500.0 և 33,000.0 հազ.ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծով նախատեսված ցուցանիշները: Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով՝ ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով նախատեսված նվազագույն սահմանաչափի պահպանման կիրառմամբ:

Թումանյան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի խոշոր, առաջնահերթություն ունեցող, նշանակալից և շարունակական ծախսային ծրագրերից են՝

- Ճանապարհային տրանսպորտի բնագավառում իրականացվելիք ծրագրերը,որոնց հիմնական գերակայություններն են ներհամայնքային ճանապարհների տուֆով սալարկումը և բնակավայրերի կենտրոնական փողոցների ասֆալտապատումը, մասնավորապես 2026թ-ին նախատեսվում է Թումանյան քաղաքի 9-րդ,11-րդ փողոցների 0,7կմ ներբնակավայրային ճանապարհների ասֆալտապատում՝ 30,000.0 հազ.ՀՀ դրամի չափով կապիտալ ծրագիր.

Ճանապարհների նորոգման և սալարկման կապիտալ ծրագրեր են նախատեսվել

Թումանյան քաղաքում 2026թ-ին՝ 14-րդ և 6-րդ փողոցները՝ 55,000.0 հազ.ՀՀ դրամի չափով, Դսեղ բնակավայրի 6-րդ և 8-րդ փողոցների ներբնակավայրային ճանապարհները՝ 155,000 հազ. ՀՀ դրամի չափով, Ահնիձոր բնակավայրում Հրանտ Մաթևոսյանի տուն տանող փողոցը՝ 50,000.0 հազ.ՀՀ դրամի չափով,

2027 թ-ին՝ Դսեղ բնակավայրի 26-րդ փողոցի սալակման կապիտալ ծրագիրը՝ 60,000. հազ. ՀՀ դրամի չափով, 5-րդ փողոցի մայթերի նորոգման կապիտալ ծրագիրը Դսեղում՝ 50,000 հազ. ՀՀ դրամի չափով, Թումանյան քաղաքում՝ 1-ին փողոցը 5-ին միացնող աստիճանների և 1-ին փողոցը 2-րդ–ին միացնող աստիճանների նորոգման կապիտալ ծրագիրը՝ 40,000 հազ. ՀՀ դրամի չափով,

2028 թ-ին՝ Դսեղ բնակավայրի 25-րդ և 53-րդ փողոցների սալակման կապիտալ ծրագիրը՝ 220,000.0 հազ. ՀՀ դրամի չափով,Լորուտ բնակավայրի հիվանդանոց տանող ճանապարհը՝ 60,000.0 հազ. ՀՀ դրամի չափով,

- Թումանյան համայնքի բոլոր բնակավայրերի արտաքին լուսավորության համակարգի ընդլայնման ծրագիրը, որը շարունակվում է նաև 2026 թ-ին՝ կազմում է 40,000.0 հազ. ՀՀ դրամ, միտված է ապահովելու մարդկանց անվտանգ և ապահով երթևեկությանը: Այն կբարձրացնի նաև համայնքի բնակչության կենսամակարդակը.
- Համայնքի համար կարևոր կենսապայման է բնակավայրերի խմելու և ոռոգման ջրի ապահովումը: Խմելու ջրի վերանորոգման և վերակառուցման կապիտալ ծրագիր է նախատեսվել 2026-2028թթ.-ին ՄԺԾԾ-ով Քարինջ բնակավայրում ՝ 50,000.0 հազ. ՀՀ դրամի չափով, Դսեղ բնակավայրում ջրի կապիտալ նորոգման ծրագիրը՝ 60,000 հազ. ՀՀ դրամի չափով, Թումանյան համայնքի Դսեղ բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման կապիտալ ծրագիրը նախատեսված է իրականացնել 2027թ-ին՝ 150,000.0 հազ. ՀՀ դրամի չափով.
- Համայնքի լավ կառավարման համար ոչ պակաս կարևոր է վարչական նստավայրերի հարմարավետությունը և աշխատակազմի գործունեությունն ապահովող միջավայրը: Այդ նպատակով պայմանավորված համայնքի ղեկավարի և աշխատակազմի ուշադրության կենտրոնում է նաև բնակավայրերում վարչական նստավայրերի նորոգման ծրագիրը: 2026 և 2028 թթ-ին նախատեսվել է Մարցի, Ծամուտի և Լորուտի վարչական շենքերի վերանորոգման ծրագրերը յուրաքանչյուր բնակավայրի համար 15,000.0 հազ. ՀՀ դրամի չափով.

1960-ական թթ-ներին կառուցված Թումանյան քաղաքի 1-ին փողոցը 5-րդ փողոցին միացնող աստիճանների նորոգման կապիտալ ծրագիրը նախատեսված է իրականացնել 2027թ-ին՝ 40,000.0 հազ. ՀՀ դրամով, իսկ բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգման կապիտալ ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2028թ-ին՝ 85,000.0 հազ. ՀՀ դրամի չափով.

- Կրթության,մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման,գույքային և տեխնիկական վերազինման մակարդակը բարձրացնելու նպատակով նախատեսվել է Թումանյանի, Քարինջի և Դսեղի Նախադպրոցական ուսումնական հաստատություններ ոչ առևտրային կազմակերպությունների մասնաշենքերում կատարել կապիտալ ծրագրեր՝ 60,000.00 հազ. ՀՀ դրամի չափով, որը կիրականացվի 2027թ.-ի ընթացքում.
- Կառավարության որոշումով իրականացվում է մասնակցային բյուջետավորման ծրագիր,որը ենթադրում է համայնքի բնակչության կողմից առաջադրվող և առաջնահերթություն ունեցող կապիտալ ծրագրերի կատարման համար համայնք–պետություն կապը: Այդ նպատակով համայնքի բյուջեի 2026-2028թթ –ին ՄԺԾԾ-ով նախատեսված է համապատասխանաբար 30,000.0, 40,000.0 և 50,000.0 հազ. ՀՀ դրամ գումարներ:

Թումանյան համայնքի 2026-2027թթ. բյուջեի կանխատեսված ծախսերի և 2025թ.-ի հաստատված ծրագրի տարբերությունը

Համայնքի 2026-2027թթ. բյուջեի ծախսերի նախագծը 2025թ-ի նկատմամբ ավել է կանխատեսված համապատասխանաբար 19,717.4 և 98,345.4 հազ. ՀՀ դրամով,իսկ ֆոնդային մասը `ավել է 171,003.0 և 276,582.0 հազ. ՀՀ դրամով.

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի վարչական մասը 2026-2027թթ. բյուջեի ծախսերի նախագծով 2025թ-ի նկատմամբ ավել է համապատասխանաբար 7,399.8 և 1,600.2 հազ. ՀՀ դրամով, իսկ ֆոնդային մասը 2026թ-ին՝ պակաս է 118,0. և 2027թ.-ին ավել 39,882.0 հազ. ՀՀ դրամով.

Ճանապարհային տրանսպորտի ոլորտի վարչական մասը 2026-2027թթ. բյուջեի ծախսերի նախագծով 2025թ-ի նկատմամբ ավել է համապատասխանաբար 348.0 և 348.0 հազ. ՀՀ դրամով, իսկ ֆոնդային մասը՝2026թ-ին ավել է 115,110. և 2027թ-ին՝ 24,890.0 հազ. ՀՀ դրամով.

Շրջակա միջավայրի պաշտպանություն ոլորտի վարչական մասը 2026-2027թթ. բյուջեի ծախսերի նախագծով 2025թ-ի նկատմամբ ավել է համապատասխանաբար 67.0 և 1,067.0 հազ. ՀՀ դրամով.

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ոլորտի վարչական մասը 2026-2027թթ. բյուջեի ծախսերի նախագծով 2025թ-ի նկատմամբ ավել է համապատասխանաբար 1,695.0 և 8,695.0 հազ. ՀՀ դրամով, իսկ ֆոնդային մասը՝2026թ-ին ավել է 89,735. և 2027թ-ին՝ 89,735.0 հազ. ՀՀ դրամով.

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի վարչական մասը 2026-2027թթ. բյուջեի ծախսերի նախագծով 2025թ-ի նկատմամբ ավել է նախատեսված համապատասխանաբար 150.0 և 1350.0 հազ. ՀՀ դրամով.

Կրթություն ոլորտի վարչական մասը 2026-2027թթ. բյուջեի ծախսերի նախագծով 2025թ-ի նկատմամբ ավել է նախատեսված համապատասխանաբար 4,840.0 և 66,540.0 հազ. ՀՀ դրամով.

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերը 2026-2027թթ. բյուջեի ծախսերի նախագծով 2025թ-ի նկատմամբ ավել է նախատեսված համապատասխանաբար 2,017.2 և 60,745.2 հազ. ՀՀ դրամով.

Ոլորտային ծախսերը 2026-2027թթ. բյուջեի նախագծերով փոփոխվել է 2025թ-ի նկատմամբ՝ մի դեպքում ավելացել է, մյուսում՝ պակասել: Այս փոփոխությունները պայմանավորված են ծրագրերի կանխատեսումներից՝ հաշվի առնելով համայնքի զարգացման ռազմավարական ծրագիրը և դրանից բխող առաջնահերթությունները:

Համայնքի եռամյա ՄԺԾԾ փուլի ներմուծմամբ համայնքի համար հնարավորություն է ընձեռնվում անցնել եռամյա ֆինանսական ծրագրավորմանը: Այդ ժամանակահատվածում համայնքի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության, ինչպես նաև այլ գործոնների ազդեցության կանխատեսումները հնարավորություն են ընձեռնում համայնքին մի կողմից՝ մեծացնել համայնքի ֆինանսական ծրագրերի կանխատեսելիությունը, ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմների հստակեցումը, իսկ մյուս կողմից՝ բարձրացնել համայնքներում բյուջետային կարգապահությունը և հաշվետվողականությունը:

Թումանյան համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող դեֆիցիտը/ հավելուրդը/

2026-2028թթ կանխատեսվող դեֆիցիտի կամ հավելուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմում արտացոլված են՝ տարեսկզբի ազատ մնացորդի վարչական մասից ֆոնդային մաս անցնող և հենց ֆոնդային մասում կանխատեսվող բյուջետային միջոցները, ընդհանուր պատկերով 2026-2028 թթ. կանխատեսվող դեֆիցիտը կամ հավելուրդը կազմում է 78,000.0, 64,000.0 և 15,000.0 հազ.ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ